ՍԱՄՎԵԼ ՖԱՐՄԱՆՅԱՆ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԱՑԻՆԵՐԻ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հազիվ թե հնարավոր է առանձնացնել գիտության մի բնագավառ, որի ուսումնասիրության առանցքային խնդիրներից մեկն այս կամ այն չափով չի առնչվում զարգացմանը: Պնդումը հավասարապես ճշմարիտ է նաև հասարակական գիտությունների պարագայում: Զարգացմանն առնչվող համաշխարհային պատմության տարբեր խնդիրներ ցայսօր էլ մնում են տարբեր մասնագիտություն ունեցող գիտնականների ու հետազոտողների ուշադրության կենտրոնում ու շարունակում են համարվել վիճահարույց: Նմանօրինակ խնդիրներից մեկն էլ շարունակում է մնալ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայի արդիականացման՝ սոցիալ-տնտեսական բացառիկ զարգացման ու հասարակական-քաղաքական նույնքան բացառիկ վերափոխման և Ճապոնացիների էթնիկ ինքնության փոխառնչության հարցը: Չնայած վերջին տասնամյակներին Չինաստանի և հարավ-արևելասիական մի քանի այլ պետությունների արձանագրած տնտեսական լուրջ ծեռքբերումներին, առանցքային համալիր չափանիշներով, Ճապոնիան այսօր էլ շարունակում է մնալ աշխարհի գերզարգացած երկրներից միակը, որը չունի քրիստոնեական ինքնություն, արևմտյան աշխարհից առանձնանում է իր ռասսայական պատկանելությամբ, ունի փոքր տարածք և սահմանափակ բնական պաշարներ:

Չնայած երկրորդ համաշխարհային պատերազմում կրած պարտությանը և ունեցած ծանր կորուստներին, Ճապոնիան շատ կարճ ժամանակահատվածում՝ շուրջ 30 տարում, ոչ միայն վերականգնեց իր տնտեսական զարգացման նախապատերազմյան մակարդակը, այլև, իր աճի տեմպերով դարձավ աշխարհի տնտեսապես զարգացած գերտերություններից և համաշխարհային տնտեսական գործընթացները թելադրող հիմնական կենտրոններից մեկը, ինչը մասնագիտական գրականության մեջ ստացավ ամենատարբեր որակումներ՝

ճապոնական հրաշք», «ճապոնական տնտեսական բում», «զարգացման ճապոնական մոդել» և այլն[1]:

Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումների վերաբերյալ հասարակագիտական մինչ օրս շարունակվող բանավեճերը հանգեցրեցին հիմնախնդրի շուրջ գիտական երկու տարբեր ուղղությունների բյուրեղացմանը: Դրանցից առաջինի ձևավորումը սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո և հետագայում ստացավ «Քրիզանտեմ և սուր»[2] կամ «ամերիկյան դպրոց» անվանումը՝ ի նշանավորումն այդ ուղղության հիմնադիրներից մեկի՝ Ռուդ Բենեդիկտի համանուն աշխատության: Ոչ առանց Միացյալ Նահանգների քաղաքական շահերի հաշվառմամբ ձևավորված այս դպրոցի հետևորդները Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հիմնական ճանապարհը համարում էին «պարտադիր արևմտականացումը՝ արևմտականացված և Միացյալ Նահանգների դաշնակից նորօրյա Ճապոնիան անհամատեղելի համարելով մշակութային իր նախկին դիմագծի հետ: Հակառակ Ճապոնիայի հետպատերազմյան աննախադեպ արդիականացման ծայրահեղ արևմտականացված տեսության, 1970-ական թթ. ձևավորվեց մեկ այլ՝ ռևիզիոնիստական տեսությունը, որի կարկառուն ներկայացուցիչներն էին ամերիկացի Չալմերս Ջոնսոնը, ճապոնացի հայտնի հետազոտող Նականե Չիեն և հոլանդացի Կարել վան Վոլֆերենը[3]: Վերջին շրջանում առավել ընդլայնելով իր հետևորդների շրջանակը՝ այս տեսությունը Ճապոնիայի հետպատերազմյան հաջողության հիմնական բանալին փնտրում էր Ճապոնիայի մշակութային ինքնատիպության և հասարակական կյանքի կազմակերպման յուրօրինակության, ճապոնացիների էթնիկ ինքնության և աշխարհընկալման առանձնահատկությունների, քաղաքական կազմակերպությունների և հաստատությունների բացառիկության մեջ, այլ կերպ ասած, այդ երևույթների պատճառները որոնում էր բուն Ճապոնիայի ներսում, այլ ոչ նրա սահմաններից դուրս: Այսպիսով, այս տեսության կողմնակիցները հետպատերազմյան արդիականացման հիմքերը որոնում էին նախապատերազմյան և հետպատերազմյան Ճապոնիայի պատմական շարունակականության մեջ, մինչդեռ ամերիկյան դպրոցի ներկայացուցիչները արդիականացման գաղտնիքը փնտրում էին

---

[1] Չնայած որոշ մասնագետների կողմից այս բնութագրումները գործածվում են արձանագրելու համար միայն Ճապոնիայի աննախադեպ տնտեսական թռիչքը, այնուհանդերձ, պակաս արտառոց և աննախադեպ չէր նաև բացարձակ միապետական կարգերից Ճապոնիայի արագ անցումը ժամանակակից ժողովրդավարական վարչակարգի:

[2] Benedict, Ruth. *The Chrysanthemum and the Sword*, Boston: Houghton Mifflin, 1946:

[3] Johnson, Chalmers, *MITI and the Japanese Miracle, the Growth of Industrial Policy 1925 – 1975*, Stanford: Stanford University Press, 1982, Nakane, Chie, *Japanese Society*, London: Weidenfeld and Nicolson, 1970, Karel van Volferen, *The Enigma of Japanese Power*, New York, Knopf, 1989

միայն 1945 թ. հաջորդած իրադարձությունների համատեքստում: Չնայած նշված երկու դպրոցների մեկնարկային տարբեր դիրքորոշումներին ու տեսություններին, նրանցից և ոչ մեկը, այնուամենայնիվ, չէր ժխտում, որ «ճապոնական հրաշքը» պատմական իրողություն էր: Միաժամանակ, այդ երկու ուղղությունները դավանող տեսաբանների ուսումնասիրությունների առանցքային խնդիրներից մեկն ուռնչվում էր Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հարցում «էթնիկ ինքնության», «ճապոնականության», «ազգային ոգու» կամ «մշակութային ինքնատիպության» ունեցած դերակատարությանը, առաջինների համար՝ այդ գործոնների դերը հերքելու, երկրորդների պարագայում՝ այդ դերը փաստարկելու և հիմնավորելու նկատառումներով:

Չնայած հրատարակված հսկայածավալ աշխատություններին, վիճակագրական ճշտությամբ, անհնար է պարզել ճապոնացիների էթնիկ ինքնության և Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման փոխառնչությունը, ինչը մեր խորին համոզմամբ, դուրս է գիտության մեկ ճյուղի և ուսումնասիրողների մեկ սերնդի հնարավորություններից: Հիմք ընդունելով ճանաչված ազգագրագետ Ս. Արությունովի՝ «էթնիկ ինքնության և մշակույթի փոխառնչության երկկողմանիության»[4], գիտական լայն քաղաքացիություն ստացած պնդումը, և ելնելով հետպատերազմյան Ճապոնիայի ազգագրական նյութի համակողմանի ուսումնասիրությունից[5], կարելի է հանգել մի շարք ընդհանրացումների և հետևությունների:

Երկրորդ համաշխարհային պատերազմում Ճապոնիայի կրած պարտությունը և երկրի փաստացի ղեկավարումը Դաշնային ուժերի կողմից, ինչն անանախադեպ էր հազարամյակների պատմություն ունեցող այդ երկրի պատմության մեջ, խորը ազդեցություն են թողել Ճապոնիայի ինչպես սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական զարգացումների, այնպես էլ հետպատերազմյան ճապոնական հասարակության էթնոմշակութային առանձնահատկությունների վրա:

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացումն առաջին դեպքն էր համաշխարհային պատմության մեջ, երբ պատերազմում պարտություն կրած և կաթվածահար եղած տնտեսություն ունեցող, քաղաքական և պետական կառա-

---

[4] Арутюнов С., *Народы и культуры. Развитие и взаимодействие*, Москва, 1989:

[5] Ֆարմանյան Սամվել, *«Ճապոնացիների էթնիկ ինքնության և Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական զարգացման ու ժողովրդավարացման առնչության հարցի շուրջ»*, Գիտություն և Տեխնիկա, Երևան, 9 (481) սեպտեմբեր, 2003 թ., 10 (482) հոկտեմբեր, 2003 թ.: Ֆարմանյան Սամվել, *«Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման և էթնոմշակութային կերպափոխման փոխառնչակցության տեսական խնդիրները»*, Պատմություն և Մշակույթ, հայագիտական հանդես, Բ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.:

վարման համակարգերի պարտադրված արմատական փոփոխությունների առջև կանգնած երկիրն ընդամենը երեք տասնամյակի ընթացքում ոչ միայն վերականգնեց նախապատերազմյան տնտեսական ցուցանիշները, այլև դարձավ իր ծավալով համաշխարհային երկրորդ տնտեսությունը՝ ձևավորելով քաղաքական ու պետական կառավարման միանգամայն նոր, յուրօրինակ և արդյունավետ համակարգ:

Մասնագիտական հարուստ գրականությունն ու ստվարածավալ, այդ թվում և միջազգայական ուսումնասիրությունները չեն ապահովում բավարար ակադեմիական բազա՝ հստակությամբ քարտեզագրելու բոլոր այն գործոնները, որոնք պայմանավորել են ճապոնիայի հետպատերազմյան բացառիկ արդիականացումը: «Ճապոնական հրաշքը» կոնկրետ երկրի պատմության կոնկրետ ժամանակահատվածում ու աշխարհաքաղաքական որոշակի միջավայրում գոյություն ունեցած տասնյակ գործոնների համադրման արդյունք է, իր էությամբ բացառիկ և ոչ ենթակա արհեստական կրկնօրինակման: Ինչքան էլ տնտեսական զարգացման և արդիականացման ճապոնական մոդելը թվա արտաքնապես գրավիչ, դրա մեխանիկական կրկնօրինակումն անհնար է և ոչ արդյունավետ, ինչի վառ ապացույցը տնտեսական-քաղաքական խորը ճգնաժամ ապրող, արդիականացման ու զարգացման արագ ճանապարհ ընտրելու հրամայականի առջև կանգնած երկրների նախկինում հաջողությամբ չպսակված փորձերն են:

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործում էական դերակատարում են ունեցել աշխարհաքաղաքական իրողությունները, նախապատերազմյան տնտեսության կառուցվածքի և դրա կառավարման արմատական վերանայումը, քաղաքական համակարգի ժողովրդավարացումը, հասարակական հարաբերությունների նախապատերազմյան սկզբունքների վերանայումը, ինֆորմացիոն միջավայրի փոփոխությունը, ինտեգրացիոն գործընթացները և բազմաթիվ այլ գործոններ: Այդ գործոնների շարքում, ճապոնացիների էթնիկ ինքնությունը, էթնոմշակութային առանձնահատկությունները կարևորագույն գործոններից մեկն է, ուստի՝ ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման համակողմանի վերլուծության համար անհրաժեշտ է համատեքստավորել »ճապոնական հրաշքի« էթնոմշակութային ակունքները: Ճապոնացիների էթնիկ ինքնությունը թեև հետպատերազմյան արդիականացման հիմքում ընկած առաջնային գործոններից մեկն էր, սակայն անհնար է վիճակագրական հստակ ճշգրտությամբ չափել առանձին վերցրած որևէ գործոնի, այդ թվում և էթնիկ ինքնության ունեցած դերակատարության կոնկրետ չափաբաժինը: Միևնույն ժամանակ, արդիականացման՝ հասարակագիտության մեջ լայն տարածում

գտած մի շարք տեսություններ Ճապոնիայի պարագայում ունեն սահմանափակ կիրառում: Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման առանձնահատկությունները հարցականի տակ են դնում արդիականացման ու արդյունաբերականացման վերաբերյալ դասական համարվող տեսությունների բազմաթիվ ելակետային մոտեցումներ:

Ճապոնացիների էթնիկ ինքնության խմբայնությունը գիտականորեն փաստված առանձնահատկություն է, ինչն էական ազդցություն է ունեցել այդ երկրի հետպատերզմյան արդիականացման տնտեսական ու քաղաքական զարգացումներում: Ճապոնացիների խմբային գիտակցությունը կանխորոշել է հանրային կյանքի, տնտեսական ու քաղաքական խորքային շատ գործընթացների սահուն, անցնցում և շարունակական ընթացքը, ինչն էական ազդեցություն է ունեցել հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական ու քաղաքական առաջընթացի հարցում: Այս առումով, հետպատերազմյան արդիականացման գործում զգալի դերակատարում է ունեցել հատկապես ընտանիքի ինստիտուտը: Նրա գործառույթների արտացոլումն աշխատանքային հարաբերությունների վրա, չլինելով զուտ հետպատերազմյան երևույթ, առավել ընդգծված դրսևորվել է հենց այդ շրջանում:

Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումները վկայում են, որ հասարակական ճգնաժամը, անորոշությունը և անցումային անհանգստությունը կարող են պարարտ հող ստեղծել հասարակական զարգացումներում էթնիկ ինքնության դերակատարության ուժեղացման, և շատ հաճախ այդ հիմքի վրա քաղաքականացված, ազգայնական գաղափարախոսությունների հզոր ալիքների ձևավորման համար:

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման և էթնիկ ինքնության փոխառնչությունները երկակի են. Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացումն իր հերթին որոշակի հակադարձ ազդեցություն է ունեցել ճապոնացիների էթնիկ ինքնության հետագա փոխակերպումների հարցում, ինչը շարունակական և անընդհատ գործընթաց է՝ չի սկսվում կոնկրետ մի կետից և չի ավարտվում կոնկրետ մի կետում:

Նիհոնձինոնի և *Նիհոնբունկառոնի*, որպես արդիականացման՝ ճապոնացիների էթնիկ ինքնության վրա ունեցած հակադարձ ազդեցության, համակողմանի ու բազմաշերտ վերլուծությունը գալիս է փաստելու, որ հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական, քաղաքական ու հանրային կյանքի, ըստ էության, հեղափոխական առաջընթացն իր հերթին բերել է սեփական մշակութային առանձնահատկությունների վերանայման ու վերարժեվորման լայն

հասարակական պահանջի, իսկ վերջինիս արդյունքում նաև ճապոնացիների էթնիկ ինքնության որոշակի փոխակերպումների:

«Ճապոնական հրաշքով» և *Նիհոնձինռոնի* ու *Նիհոնբունկառոնի* ծավալմամբ պայմանավորված, հետպատերազմյան շրջանում ճապոնացիների էթնիկ ինքնությանը հատկանշական թերարժեքության ախտանիշի վերացումը սկիզբ դրեց հակառակ երևույթին գերարժեքության ախտանիշի ժամանակավոր ի հայտ գալուն: Այսօր, կարելի է հաղթահարված համարել ճապոնացիների մոտ թերարժեքության ախտանիշը, ու նաև փաստել, որ ճապոնացիների պարագայում այն չվերածվեց թերարժեքության բարդույթի, ինչի ձևավորման ակունքներում սովորաբար կարող են ընկնել անկախ պետականության և պատմական հայրենիքի կորուստը, ժողովուրդների ցեղասպանության ենթարկված լինելու հանգամանքը և այլն: Նույնքան հիմնազուրկ է մերօրյա ճապոնացիների էթնիկ ինքնությանը գերարժեքության բարդույթի վերագրումը:

Japan's postwar modernization and the Japanese ethnic identity: Some aspects of correlation

Development and modernization still remain one of the controversial issues in the field of social sciences. It is equally true in the case of Japan's postwar modernization. The article goes through a brief analysis of the intellectual schools formed after the WWII, generally recognized in academics as "westernization" and "revisionist" schools. Article argues that the phenomenal and, by all accounts, uncontested modernization of Japan following the WWII, which is widely referred to as "Japanes miracle", questioned the depth and width of its impact on the Japanese people. On the opposite side, the characteristic features of Japanese ethnic identity also left their impact on the course of the Japanese modernization. As a result, we witnessed a reciprocity of the role of ethnic identity in Japan's postwar modernization. The Japanese ethnic identity played a role in Japan's postwar transformation. The modernization process of Japan in its case affected further transformation of the Japanese ethnic identity.